

# ՊԱՐԱՐԱԶՈՒՆՉ<sup>1)</sup>

Գ. քն. Նժդեհեանի

## ԵՐԿՐՆԷՆ ՈՐ ԵՐԿՐԸ



Աստուած ուզեց երկինքն ու երկիրը ստեղծել, հրամայեց՝ ու կազմուեցան անոնք, իրենց եօթնական աստիճաններով կամ չարկերով: Երկնքի առաջին աստիճան կամ չարկն է երկրի մակերևույթը, երկրորդ՝ ամպերը, երրորդ՝ լուսինը, չորրորդ՝ սրեզակը, հինգերորդ՝ աստղերը, վեցերորդ՝ հրեշտակներու և սուրբերու կայանը, և եօթներորդ՝ Աստուծոյ աթոռը, որ լուսեղէն է և գրուած Սերովբէներու ու Քերովբէներու թևերու վրայ: <sup>2)</sup>

Իսկ երկիրը կազմուեցաւ այնպէս ինչպէս այժմ կը տեսնուի, իւր լեռներով ու ձորերով, իւր ծովերով ու ցամաքներով, և ալն և ալն: Ինչպէս երկրի երեսը կըտեսնենք ցամաքալին ու ծովալին այլևայլ բաժանումներ, ու խորուրդուութիւններ, անկանոնութիւններ, ասոնց նման, և ասոնց հակապատկերը ունի երկիրը իւր վարի կողմէն, այսինքն ծովերու գոգ չատակը վարի կողմէն կը ներկայացնէ լեռներ և լեռնազաշտեր, իսկ մեր լեռներու և լեռնաշղթաներու չատակը կը

<sup>1)</sup> Այլազերտի մէջ ազգագրական նխթեր հաւաքած ժամանակ նկատելի եղաւ, որ Ս. Գրքին վերաբերեալ աւանդութիւնները այնքան շատցան, որ ալնս դժուար էր զետեղել զանոնք շառաւիղի բաժնին մէջ, այս պատճառով անջատեցինք այդ ժաւր շառաւիղի բաժնէն, առանձին հրատարակելու համար, և անուանեցինք «Պատաւաշունչ»: Այս անունը մտղովորական է, և բնականաբար չառաջադրուած շատ գաւառներու մէջ, որով կը հանցուին այն աւանդութիւնները, որոնք Ս. Գրքէն գոյրս են, «պատուներու հաւաքածը», «Աստուածաշունչ» անուան հակառակը, հեզնակոն, անհաւատայի, թէ՛ և շատեր կը հաւատան անոնց, կարծեցով թէ Ս. Գրքէ մէջ գրուած են:

<sup>2)</sup> Թ՛ւ երկնքի մէջ, և թէ՛ երկրի ներսը կայ Ս՜Ա ջրի՞ ոգիկանոս, որոնք ստեղծուած են երկիրը պատծելու համար, ինչպէս անգամ մը պատահեցաւ, ջրհեղեղի ատեն: Երկինքը և երկիրը կը պատուին, և «Ս՜Ա ջուր»ը կ'ոգոզէ երկիրը:

ներկայացնէ՛ Տովեր ու ովկիանոսներ: Մեր տեսած աղբիւրները ոչ այլ ինչ են, եթէ ոչ մեր լեռներու ներքևի ընդգետնեայ Տովերէն գուրս Ժայթքող ջրեր: Մեր Տովերն այ նոյնպէս իրենց տակի լեռներուն ու գաշտերուն աղբիւրներ կը մատակարարեն փոխադարձաբար:

Սրկիրը տափարակ մէ ունի, երկու երեսէն տեղ տեղ ուռած և տեղ տեղ դողացած բաղարջի նման, որ դրուած է վիթխարի եզան մը կոտորներուն վրայ: Երբ չարածնի ճանճերը ու պիծակները սոց եզան աչքերու վրայ իջնեն խայթեն, ու ծծեն հիւթը՝ եղբ ցաւ կ'զգայ, կը ցնցէ իր գլուխը, այդ չար հիւրերը հեռացնելու համար, այն ատեն երկիրն այ կը ցնցուի և առաջ կուզան երկրաշարժներ:

Իսկ ոմանք կը հաստատեն, որ Լեխաթան անուևով մուկ մը պատած է երկրի չորս կողմը, այնպէս որ գլուխը պոչին հասած է, հազիւ մէկ թգալափ հեռաւորութեամբս Բայց Լեխաթանը չ'դիտեր որ իւր քթի առջևինը իւր պոչն է, ուստի շարունակ թշնամաբար կը հետամտի խածնել ու բռնել գայն, լողալով երկիրը շրջապատող ովկիանոսի մէջ, միշտ փաթթած լինելով երկիրը: Սակայն Լեխաթանը չի կրնար իւր պոչին հասնել, որովհետև ստեղծուած օրէն միևնաւ աշխարհի վերջը մազալափ չի աճիր: Եթէ յաջողի Լեխաթանը բռնել իւր պոչը կ'աշխատի կուլ տալ, հետզհետէ ձգելով, այն ատեն աշխարհը ջարդ ու փշուր կ'ըլլայ: Միայն երկիրը կը ցնցուի և երկրաշարժներ առաջ կուզան, երբ այս վիթխարի մուկը իւր պոչը բռնելու համար ոտոււմներ կ'ընէ, առաջ կը շարժի:

Ինչ այ ըլլայ, երկիրը տափարակ ու բոլորչի է, անխի պէս, առաջին կարծիքի համաձայն եզան կոտորի վրայ դրուած, ինչպէս անիւր սունակի վրայ, իսկ ըստ երկրորդ կարծիքի՝ ովկիանոսի վրայ դրուած ու Լեխաթանը անխի երկաթէ շրջանակի պէս շուրջը փաթթուած <sup>1)</sup>:

Ժողովուրդը հաստատելով այս բանը, կը պնդէ միանգամայն, որ աշխարհը ծայր չ'ունի: Աշխարհի որ կէտին վրայ մարդ կանգնի՝ այնտեղ է թէ աշխարհի և թէ երկնքի կեդրոնը:

Սրկիրը, ինչպէս երկինքը, ունի եօթը աստիճաններ—չարկեր, որոնք աստիճանաբար դէպի վար—անդուևդը կիջնեն, և կը կուլուին—Գեթիմ, Դոսիս, Սանգարամեթ, Տարսարոս, Գեհնե, Ընդուզ (ան-

<sup>1)</sup> Լեխաթանի գլխի վրայ շատ մեծ աղամանդ մը կայ, որ գիշեր ցերեկ լոյս կուտայ, և Լեխաթանը անով կ'առաջնորդուի, որովհետև արևի լոյսը այնտեղ չի հասնիր: Ջրի մէջ շարժած ատեն աղամանգի լոյսը աշխարհի այս ու այն կողմը կը փառլելի: Պարզկայ գիշերը երկնքի հորիզոնի վրայ եթէ ուշագրութեամբ նայենք՝ շատ որոշ կերպով կը նշմարուի: Այս փառլոււմները կ'երևին յաճախ հիւսիսային կողմը:

դունդ), և Յանասակ (անյատակ): (2) կրցանք իմանալ այս չարկերու դասաւորութեան եղանակը, դէպի վար, կամ դէպի վեր):

Տիեզերքը իւր ամբողջութեամբ, այսինքն՝ երկինքն ու երկիրը ի միասին, երեք գլխաւոր մասերու կամ չարկերու կը բաժնուի, որոց առաջինը ընդդեմանեաց աշխարհն է, երկրորդը՝ «գետնի վրայ», ուր մենք կը ջնակինք, և երրորդը՝ երկնքի մէջ: Այս երեք չարկերու մէջ ալ կան բնակիչներ—մարդիկ, որոնք կ'զբաղին և կ'ապրին գլխաւորապէս երկրագործութեամբ, և բոլոր այն գործերով, ինչ որ կը տեսնուին երկրի վրայ: Տարբերութիւնը միայն հագուստի մէջ է, որովհետեւ վառի չարկի մարդիկ իրենց գօտին ծունդերու վրայ կը կապեն, միջին չարկի մարդիկ—մենք, փորի վերին մասին վրայ, իսկ վերին չարկի մարդիկ՝ սրտի վրայ:

Երկիրը՝ զոր գեթիմ կամ գեթիմ կ'անուանենք՝ իւր ծովերով ու ցամախներով սուրբ է, որպէս Աստուծոյ ձեռաց գործ, ինչպէս երկինքը: Ժողովուրդը յաճախ երգում կ'ընէ այդ յորս անուններով—Էրկինք, Կետինք, Ծով, ցամաք վկայ եղնին, որ . . .: Եւ այս երգումը աւելի հաւատարի, վստահելի է, քան եթէ Աստուծոյ անունով եղած ըլլար

### Հ Ր Ե Յ Ց Ո Վ Ն Ե Ր

Աստուած՝ զինքը փառաբանելու և իրան ծառայելու համար լոյս սէն հրեշտակներ ստեղծեց: Հրեշտակները թեւաւոր, մարդակերպ արարածներ են, միամիտ և արդար, մեր աչքին անտեսանելի, բայց եթէ ուզեն իրենց սիրած մարդու աչքին կ'երևին մանուկի և յաճախ «ճերմակ մուրուք» ձերուների կերպարանքով: Ատոնց գլխաւորները, Սերովբէք և Քերովբէք, իրենց թեւերու վրայ բռնած ունին Աստուծոյ աթուր: Իսկ միւս հրեշտակները բաժանուած են երկու մասի, մէկ մասը վեցերորդ երկնային չարկի մէջ կը բնակի, առանց ուրիշ տեղ տեղափոխուելու, և շարունակ ընտուած կը փառաբանեն: Իսկ միւս մասը ծառայութեան մէջ կը գտնուի, երկնքի և երկրի մէջ կը պտտին, ել և էջ կ'ընեն, Աստուծոյ հրամանները կը կատարեն, մարդերու հոգիները «կ'աւանդեն», և հին ժամանակները նահապետներուն մարգարէներուն, առաքելներուն, հայրապետներուն, և առհասարակ Աստուծոյ սիրած մարդերուն կ'երևէին, կամ «ճշգրիտ», (ականատես), և կամ «երազով», առանց թևի, սպիտակ հագուստներով, երիտասարդի կամ աւևորի կերպարանքով, և Աստուծոյ հրամանները կը հաղորդէին: Այս խումբի—ծառայութեան մէջ գտնուողներու գլխաւորներն են Գարբիէլ և Միքայէլ հրեշտակապետները, և մասնաորապէս հո-